ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 23-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլամյանը, Լ. Ն. Ներսիսյանը. ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Ա. Մ. Պետրոսյանցը. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվետլովան, ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը:

Ներածական խոսքով ժողովը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ընդգծեց, որ հաշվետու տարում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեությունն ընթացել է ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների անշեղ կատարման նշանաբանով։ Անցած տարի հանրապետության գիտնականների կյանքում նշանակալից իրադարձություն էր ՀՍՍՀ ԳԱ գործունեության քննարկումը ՍՍՀՄ ԳԱ նախագահության նիստում։ Ընդունված որոշման մեջ բարձր գնահատական է տրված կատարված աշխատանքին, միաժամանակ նշված են թերությունները, որոնց վերացման համար գիտությունների ակադեմիան մոբիլիզացնում է բոլոր ուժերը։ Վերջում Վ. Հ. Համբարձումյանը հանրապետության բոլոր գիտնականների անունից ՀԿԿ կենտկոմին, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և Մինիստրների խորհրդին ջերմ շնորհակալություն հայտնեց գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերած ամենօրյա հոգատարության համար։

ՀՍՍՀ ԳԱ 1977 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի գլխավոր գիտնական-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ա. Բակունցը: Նա ասաց, որ հաշվետու տարում ակադեմիայի գիտական ու կազմակերպական գործունեությունը նպատակամղված էր 10-րդ հնգամյակի խնդիրների կատարմանը։ Զգալի աշխատանքներ են կատարվել գիտության ու տեխնիկայի նվաճումները ժողովրդական տնտեսության մեջ արմատավորելու ասպարեզում։ 1977 թ. մշակվում էին 450 թեմա ընդգրկող 158 պրոբլեմ։ Բաժանմունքների գործունեության արդյունքները վերլուծելիս զեկուցողը նշեց հետազոտությունների առավել նշանակալի արդյունքները։ Զգալիորեն ամրապնդվել է գիտության և արտադրության կապը՝ ժողովրդական տնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրումն արագացնելու նպատակով։ Դրա շնորհիվ պլանավորված 30 թեմայի փոխարեն ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է 41-ը։

Վերջում զեկուցողն անդրադարձավ գիտական խորհուրդների գործունեությանը, ամփոփեց գյուտարարական և պատենտալիցենզային աշխատանքի բնագավառում ձեռք բերված նվաճումների արդյունքները, խոսեց գիտական կադրերի պատրաստման վիճակի մասին։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի ելույթը նվիրված էր պատմական հուշարձանների պահպանության և օգտագործման հարցերին։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Մ. Պետրոսյանցը, ակադեմիկոսներ Մ. Գ. Ներսիսյանը և Ա. Ա. Առաքելյանը: Ա. Մ. Պետրոսյանցի զեկուցման մեջ արծարծվեցին մեր երկրում ատոմային էներգետիկայի զարգացման հարցերը։ Մ. Գ. Ներսիսյանը խոսեց Հայաստանում դեկաբրիստների գտնվելու և օտարերկրյա դավիչներից Հայաստանի ազատագրմանը նրանց մասնակցելու մասին։ Ա. Ա. Առաքելյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ ՍՍՀՄ հանրապետությունների տնտեսական համագործակցության հիմնական կողմերին։

Ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն։ «Մեծարման գիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը և Ա. Գ. Նազարովը: «Վաստակագրով» պարգևատրվեցին ակադեմիկոս Ս. Հ. Վարդանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ

Դ. Ա. Դալոյանը, Ի. Ք. Դեռոյանը, Մ. Մ. Մկրյանը, պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Հակոբյանը. ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուներ Կ. Մ. Զոբանյանը և Ռ. Մ. Մարտիրոսյանը: Մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր»։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 21-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1977 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը: Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկներն իրենց աշխատանքի հիմքում դնելով ՍՄԿԿ XXV համագումարի որոշումները, վերակառուցել են աշխատանքները, մշակել կոնկրետ միջոցառումներ՝ իրենց առջև դրված խնդիրները կատարելու համար։ Այնուհետև Գ. Բ. Ղարիբջանյանն անդրադարձավ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և աղգագրության, արևելագիտության ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի անդամների գործունեությանը, նշելով ձեռք բերված հաջողություններն ու տեղ գտած թերությունները։ Վերջում դեկուցողը նշեց, որ 10-րդ հնգամյակի 3-րդ տարին պարտավորեցնում է ավելի եռանդով աշխատել հանուն սովետական գիտության հետագա դարգացման և առաջընթացի, հանուն մեր հայրենիքի բարգավաճման ու հզորացման։

Գ. Բ. Ղարիբջանյանի զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը, Ա. Ա. Առաքելյանը. Բ. Ն. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը, պատմական գիտությունների դոկտորներ Ա. Պ. Սիմոնյանը և Խ. Հ. Բարսեղյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին Հայաստանի պատմության պետական թանգարանը ակադեմիայի սիստեմում ընդգրկելու, գիտական կոորդինացիայի բարելավման, պատմական հուշարձանների պահպանության, գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման և բազմաթիվ այլ հարցերի մասին։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Լ. Ս. Խաչիկյանը, Ս. Տ. Երեմյանը և տնտեսական գիտությունների դոկտոր Վ. Ե. Խոջաբեկյանը։ Լ. Ա. Խաչիկյանը խոսեց «Մ. Մաշտոցի անվան մատենադարանում տարվող աշխատանքների արդյունքների և հետագա խնդիրների մասին»։ Ս. Տ. Երեմյանի զեկուցումը նվիրված էր հայ ժողովրդի պատմության պարբերացման մի քանի հարցերին, իսկ Վ. Ե. Խոջաբեկյանի զեկուցման թեման էր «Սովետական Հայաստանի բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները»։

ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբ-

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1977 թ. գործունեության մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Բրուտյանը։ Նա իր զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծեց բաժանմունքի գիտական հիմնարկների՝ փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, դրականության և արվեստի ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի անդամների 1977 թ. գործունեությունը։ Գ. Ա. Բրուտյանը նշեց ձեռք բերված հաջողություններն ու տեղ գտած թերությունները, ինչպես նաև խոսեց բաժանմունքի առջև ծառացած խնդիրների մասին։

Հաշվետու զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Բ. Ջաճուկյանը, Ա. Տ. Ղանալանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ

Մ. Մ. Մկրյանը, է. Մ. Ջրբաչյանը և փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը: Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը և խոսեցին դիտական կոորդինացիայի բարելավման, երիտասարդ կադրերի պատրաստման, բնական և հասարակական գիտությունների կապի ընդլայնման, գիտական հետազոտությունների որակի բարելավման և այլ հարցերի մասին։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ է. Մ. Ջրբաչյանը և փիլիսոփայական գիտությունների դոկտորներ Ս. Ս. Թովմասյանն ու Լ. Մ. Կարապետյանը: է. Մ. Ջրբաչյանը խոսեց XX դ. սկզբի հայ գրական-քննադատական հիմնական ուղղությունների մասին։ Ս. Ս. Թովմասյանի զեկուցման թեման էր «Գիտատեխնիկական հեղափոխությունը և զարգացած սոցիալիստական հասարակարգը»։ Լ. Մ. Կարապետյանը զեկուցեց «Զարգացած սոցիալիստական հասարակարգի պայմաններում սոցիալիստական ապրելակերպի սահմանադրական հիմունքները և երաշխիքները» թեմայով։

Ժողովում ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Բրուտյանը։